ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքում առկա խնդիրների՝ ըստ առաջնահերթությունների դասակարգման և դրանց տրվող լուծումների գործում կարևոր է բյուջետային գործընթացի ճիշտ կազմակերպումը, այն է՝ բյուջեի եկամուտների հավաքագրման անհրաժեշտ մակարդակի ապահովում, հավաքագրված միջոցների արդյունավետ և խնայողական օգտագործում:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

1. Իրականացնել համայնքի հաշվեկշռում գտնվող վարչական կառույցների շենքային պայմանների բարելավման աշխատանքներ,

2. Սահմանել համայնքի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների նոր՝ ավելի բարձր և ավելի որակյալ նշաձող,

3. Աշխատանքներ իրականացնել բազմաբնակարանային բնակելի շենքերի սպասարկման բնագավառում,

4. Իրականացնել կապիտալ ներդրումներ համայնքի ճանապարհային տնտեսությունում, ջրագծերի նորոգման/փոխարինման աշխատանքներում,

5. Համալրել համայնքի մասնագիտացված մեքենա-մեխանիզմների տնտեսությունը,

6. Վեր հանել համայնքում առկա սոցիալապես խոցելի խմբերի խնդիրները և դրանց տալ լուծումներ՝ համայնքի լիազորությունների շրջանակներում,

7. Նպաստել համայնքի մարզամշակութային կյանքի ակտիվացմանը, համայնքում տուրիզմի զարգացմանը:

2022 թվականի բյուջեի նախագծով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ձևավորած վարչական մասի պահուստային ֆոնդը նախատեսվում է օգտագործել բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման և համայնքում կապիտալ ծրագրերի ֆինանսավորման /համաֆինանսավորման/ նպատակով:

Վերոնշյալ թվարկված ուղղություններն իրականացնելիս անհրաժեշտ է մշտապես պահպանել համայնքի բնակավայրերի համաչափ զարգացման հայեցակարգը: Մեր ծրագրերի, նպատակների իրագործումն ուղղված է համայնքի բնականոն զարգացումն ապահովելուն և համայնքի բնակիչների կյանքի որակի բարձրացմանը:

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ